

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՊԻՐՔ

Հոդված 38. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը ներկայացվում է լիազոր մարմին:
2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝
 - 1) իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը.
 - 2) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը.
 - 3) երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածո(ները).
 - 4) ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, և հատակագիծը՝ ծայրակետային կորդինատներով.
 - 5) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը՝ համաձայն 39-րդ հոդվածի.
 - 6) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալները.
 - 7) դիմումատու իրավաբանական անձի ~~10 կամ ավելի տոկոս~~ բաժնետոմս (բաժնեմաս, վիալ) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը).
- 7.1)
- 8) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.
- 9) ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Հոդված 49. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը

1. Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության ամերիկային կազմակերպությունը) կարող է դիմել լիազոր մարմին՝ օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով:
2. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝
 - 1) իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը, նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին.
 - 2) հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա.
 - 3) ընդերքի այն տեղամասի երկրաբանական նկարագրությունը (մանրամասն գծագրված հատակագծով, սպառիչ տեղեկություններով տվյալ հանքավայրի հաստատված պաշարների և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանների վերաբերյալ), որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք.
 - 4) հաստատված օգտակար հանածոների ցանկը.
 - 5) օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը.
 - 6) հանքի փակման ծրագիրը, որը պետք է ներառի՝
 - ա. հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,
 - բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (ելնելով հանքավայրի շահագործման եղանակից),
 - գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը,

ե. հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը,

զ. հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

7) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ.

8) դիմումատու իրավաբանական անձի ~~10 կամ ավելի տոկոս~~ բաժնետոմս (բաժնեմաս, փայ) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան.

9) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

10) ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.

10.1) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները.

11) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը: